

Թիւ 26018
Սեպտեմբեր 19, 1978

Մեծայարդ

Տիար Պարզեւ Խոճանեան
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
ծխական Խորհուրդի Առենապետ
Թորոնթօ.

Սիրելի Տիար Խոճանեան,

Առաջնորդի Փոխանորդ Հոգշ. Տ. Յուսիկ ծ. Վրդ. Պաղասան մեզի
Ներկայացուց իր տեղեկագիրը՝ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեց-
ւոյ մէջ իր նախազահութեամբ գումարուած ժողովին մասին, մասնակ-
ցութեամբ ծխական Խորհուրդի ինչպէս նաեւ մեր կողմէ նշանակուած
հինգ ազգայիններու:

Թորոնթոյի մէջ երկրորդ ծուխ մը կազմելու մեր ծրագիրը յառաջ
տանելու համար անհրաժեշտ է ծխական Խորհուրդի կողմէ հետեւեալ
նախնական աշխատանքները կատարել.

1. Քարտէսի վրայ նշանակել իբրեւ սահման երկու ծուխերու՝ Տօն
Վարդուէյ՝ մեծ պողոտան, որ կ'երկարի Հիւսիսէն դէպի Հարաւ:

2. Երկրորդ ծուխի սահմանը պիտի ըլլայ այս զիծէն Արեւելք գրտ-
նուող մասը: Համեցէք քարտէսի վրայ Արեւմտեան մասին մէջ կարմիր
մատիտով նշել հայաբնակ շրջանները եւ ստուգել թէ քանի՞ հայ ըն-
տանիքներ կը բնակին իւրաքանչիւր շրջանակի մէջ:

3. Համեցէք կազմել իւրաքանչիւր շրջանակի մէջ բնակող հայութեան
անուններու եւ հասցէններու ցանկը:

4. Համեցէք առանձինն արձանագրել ցանկը անուններու եւ հասցէննե-
րու Արեւելեան բաժնին մէջ գանուող այն ընտանիքներուն որոնք արա-
տու անդամ են Եկեղեցւոյդ:

5. Այս բոլոր տեղեկութիւնները, քարտէսով եւ անուններու ցանկերով, առաջին առիթով համեցէք մեզի դրկել, որպէս զի Թեմական Խորհրդին ներկայացնենք եւ Թորոնթոյի մէջ երկրորդ ծուխը կազմակերպելու համար որոշում առնենք:

Սպասելով Վերոյիշեալ տեղեկութեանց, ձեզի եւ ծխական Խորհրդի բոլոր անդամներուն կը ցանկանք առաւել քաջառողջութիւն եւ յաջողութիւն:

Միլոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ